2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ, ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՆԻ ԴԱ - 07/23

ք.Երևան «02» փետրվարի 2023թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ջոնիկ Մարգարյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների եւ դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշմամբ հաստատված հավելված N 5-ի 7-րդ աղյուսակը (այսուհետ՝ որոշում), ինչպես նաև Արդարադատության նախարարի հրամանով հաստատված՝ 2023 թվականի գեղագիտական դաստիարակության և կրթության ոչ ֆորմալ կրթության ծրագրերը (դասախոսությունների և գործնական պարապմունքների ցանկերը՝ մոդուլները) /և այլ իրավական ակտերը/ (այսուհետ՝ հրաման)՝ «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրի մաս հանդիսացող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի մաս հանդիսացող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» միջոցառման իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29–ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման հավելված 5-ի 7-աղյուսակով նախատեսված՝ 175211,5 հազ. (մեկ հարյուր յոթանասունհինգ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ օրենքով նախատեսված հարկերը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել հրամանով և սույն պայմանագրով սահմանված կարգով և չափով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները եւ պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը եւ որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանել թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, եւ կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.2.-ի կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը եւ պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացնելու,

բ. կազմակերպությունը երկու եւ ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. սույն պայմանագրի 5.1. կետով սահմանված կարգով պետական մարմնից ստանալու որոշմամբ սահմանված՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը եւ պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչեւ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի եւ սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը, այլապես այն համարվում է ընդունված:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտները հաստատելու մասին» N 725-Ն հարամնի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով եւ (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները եւ ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո կազմակերպությունը միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած՝ ՀՀ պետական բյուջեից ստացված միջոցների տնտեսումները (խնայողությունները) վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 25-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Հաշվետվությունների ներկայացման ժամկետները

4.1. Կազմակերպությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո պետական մարմին է ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն հրամանով եւ ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձեւերին համապատասխան կազմված հաշվետվությունները՝ այդ հրամաններով սահմանված ժամկետներում, ինչպես նաեւ կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային եւ տարեկան ամփոփ հաշվետվություններ:

5. Վճարման կարգը եւ ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են որոշմամբ նախատեսված՝ ծրագրով սահմանված վճարումների կատարման եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ ամսական կտրվածքով՝ ոչ ուշ քան հաջորդ ամսվա 10-ը, բացառությամբ դեկտեմբեր ամսվա հասանելիք գումարի, որը կփոխանցվի մինչեւ դեկտեմբերի 20-ը՝ համաձայն ներկայացված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի (հավելված 2):

5.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով եւ ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով եւ վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու եւ խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում եւ հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից (ներառյալ) հետո ծագած հարաբերությունների վրա եւ գործում է մինչեւ կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետեւանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, եւ որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական եւ արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը եւ այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր եւ ստորագրված են կողմերի կողմից:

9.3. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաեւ սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եւ ստորագրությունները

Պետական մարմին՝	**Կազմակերպություն՝**
Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն	«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,	ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 02509478
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011194330	Հ/Հ 900018004821
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Կ. Գևորգյան	Հ. Մարգարյան

Հավելված N 1
2023 թվականի _____ -ին
կնքված N_____ պայմանագրի

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	**Համառոտ բովանդակությունը**	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**	**Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**	**Վերջնաժամկետը**	**Պահանջվող գումարը (հազ. Դրամ)**
1.	**Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական (ոչ ֆորմալ կրթության) ծրագրերի իրականացում**	1.Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության (ոչ ֆորմալ կրթության) ծրագրի իրականացումը ներառում է հետևյալ դասընթացները (թեմաները). ➢ *Դեկորատիվ կիրառական արվեստ,* ➢ *Հայոց լեզու և խոսքի մշակույթի հիմունքներ,* ➢ *Օտար լեզու՝ անգլերեն/ռուսերեն,* ➢ *Համակարգչային հմտություններ,* ➢ *Էթիկա և հայագիտություն,* ➢ *Ընտանեկան բռնության կանխարգելում/հույզերի կառավարում,* ➢ *Արհեստագործական հմտություններ:* 2. Դասընթացներն իրականացվելու են առնվազն 18 խմբով (յուրաքանչյուր խմբում նվազագույնը՝ 2, առավելագույնը՝ 10 մասնակից), ընդհանուր առմամբ առնվազն՝ 110 կալանավորված և	Դատապարտված և կալանավորված անձանց (ներառյալ պրոբացիայի շահառուների) գեղագիտական դաստիարակությանը և կրթությանն ուղղված դասընթացների իրականացում	Արդյունք՝ Գիտելիքների տրամադրում (փոխանցում), հմտությունների ու կարողությունների զարգացում և գեղագիտական դաստիարակություն: Գնահատման չափանիշներ՝ 1.Ծրագրի (միջոցառման) հավաստագիր (վկայական) ստացած մասնակիցների թիվը: Ծրագրի ավարտական հավաստագիր տրամադրվում է այն մասնակիցներին, ովքեր առնվազն երեք թեմաներից կազմված ուսումնական մեկ մոդուլի առնվազն երկու (կամ ավելի) թեմաների շրջանակում մասնակցել են 180 ակադեմիական ժամ տևողությամբ (ընդհանուր հանրագումարը) դասընթացների՝ բայց մեկ թեմայից պետք է մասնակցած լինեն առնվազն 60		

		դատապարտված անձի (ներառյալ պրոբացիայի շահառուների) հաշվարկով: Դասընթացների ընդհանուր տևողությունը ողջ միջոցառման ընթացքում 4320 ակադեմիական ժամ է: Մեկ ակադեմիական ժամի տևողությունը 40 րոպե է: Ծրագրի իրականացումը պետք է սկսվի 2023 թվականի մարտի 6-ից ոչ ուշ: Դասախոսությունները ներառում են թեմայի շրջանակում տեսական և հիմնարար գիտելիքների տրամադրում, իսկ գործնական պարապմունքները՝ գործնական հմտությունների զարգացման ուղղված ինտերակտիվ ուսուցում, ինչպես նաև կալանավորված և դատապարտված անձանց (ներառյալ պրոբացիայի շահառուների) անհատական աշխատանքների պատրաստում և ցուցադրություն, ուսումնական կամ փաստավավերագրական ֆիլմերի ցուցադրում և այլն: 3. Ծրագիրը (միջոցառումը) պետք է իրականացվի՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեկատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց համար, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնում կամ տարածքային		ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացի: Հակառակ պարագայում մասնակիցներին՝ ըստ թեմաների, տրամադրվում է մասնակցության վկայագիր, եթե մասնակիցը մեկ թեմայի շրջանակում մասնակցել է առնվազն 60 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացի, իսկ այն դեպքում երբ ուսումնական մոդուլը (արհեստագործական) կազմված է մեկ թեմայից, ապա մասնակիցը մասնակցության վկայագիր ստանում է եթե մասնակցել է դրա առնվազն 120 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացներին, այս դեպքում 180 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացներին մասնակցելու դեպքում տրամադրվում է Ծրագրի ավարտական հավաստագիր 2.Դասընթացների համապատասխանությունը հրամանով հաստատված ծրագրի թեմաներին:		

		ստորաբաժանումներում՝ պրոբացիայի շահառուների համար: Դասընթացների իրականացման ընթացքում պետք է վարվեն դասընթացների մասնակիցների հաճախելության մատյաններ: 4.Դասընթացների իրականացման համար ուսուցանվողներին (ունկնդիրներին) տրամադրվում են անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութեր (կավ, ներկեր, վրձիններ և այլն) և գրենական պիտույքներ:			**2023 թվականի դեկտեմբերի 30-ը (մինչև)**	**175211,5**
2.	**Քրեակատարողական հիմնարկներում գտնվող իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթության (հանրակրթության) ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման**	Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների (որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի) համար հանրակրթական ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման՝ 19 տարեկան և ավել տարիք ունեցող դատապարտյալներերի համար. 1. Ծրագրի նպատակը սովորողների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ նրանց ընդհանուր մակարդակի բարձրացումն է, համապատասխան կրթական մակարդակի ձեռքբերումը, իրավահպատակ վարքագծի ձևավորման, ընտանեկան և	Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալների (որոնց պատժից ազատման ժամկետի լրանալուն կրթության իրավունքի իրացման վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելու պահին մնացել է մեկ տարուց ավելի) համար հանրակրթական ծրագրերի իրականացում, առանց տարիքային սահմանափակման՝ 19 տարեկան և ավել տարիք ունեցող	Արդյունք՝ Ֆորմալ կրթության (հանրակրթության) միջոցվ՝ գիտելիքների տրամադրում (փոխանցում), հմտությունների ու կարողությունների զարգացում և անձի վերասոցիալականացում: Գնահատման չափանիշներ՝ 1.Ծրագրի (միջոցառման) արդյունքում՝ դրսերեկույթային ձևով (էքստեռն) կամ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնությամբ այլ քննությունների ձևով ավարտական քննություններ հանձնած և դրա արդյունքում համապատասխան կրթության վկայականներ ստացած մասնակիցների թիվը:		

		հասարակական կյանքին, աշխատելուն, շարունակական կրթության և մասնագիտական գործունեության սկիզբ դնելու համար նախապատրաստելը: 2. Ծրագիրն իրականացվում է քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող 100 (մինչև) դատապարտյալների համար, 3. Ծրագրի ընդհանուր տևողությունը մեկ ու կես ուսումնական տարի է, որի մեկ ուսումնական տարին (երկու ուսումնական կիսամյակ) պետք է իրականացվի 2023 թվականին՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը՝ ընդհանուր 4872 (մինչև) ակադեմիական ժամ տարի/շաբաթ տևողությամբ: 4. Ծրագրում ընդգրկված առարկաների թիվն ինն է, իսկ մասնագիտական խմբերի (դասարանների) թիվը տասնութն է (մինչև): Ծրագրի մեկ ակադեմիական ժամի տևողությունը քառասուն րոպե է: 5. Ծրագիրը կազմվել է այնպիսի առարկաներից և տևողությամբ (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնությամբ), որպեսզի սովորողները Ծրագրի ավարտին (կամ ընթացքում) պատրաստ լինեն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնելու, հիմնական և միջնակարգ կրթկան ծրագրերին համապատասխան՝	դատապարտյալներերի համար	2.Ծրագրի համապատասխանությունը սույն պայմանագրով սահմանված չափանիշներին:		

		դրսերեկոյթային ձևով (էքստեռն) ավարտական քննություններ կամ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համաձայնությամբ այլ քննությունների ձևով ավարտական քննություններ: 6. Ծրագրի շրջանակում Կազմակերպությունը ձեռք է բերում անհրաժեշտ տեխնիկա (նաև համակարգչային) և գույք, ինչպես նաև Ծրագրի իրականացման համար աշխատանքի է ընդունում անհրաժեշտ թվակազմով համապատասխան մասնագետներ: 7. Ծրագրի շրջանակում սովորողներին տրամադրվում են անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութեր և գրենական պիտույքներ և այլ ուսումնաօժանդակ նյութեր:				

Պետական մարմին՝
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011194330

Գլխավոր քարտուղար

Ս. Գևորգյան

Կազմակերպություն՝
«Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02509478
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821

Տնօրեն՝

Զ. Մարգարյան

Կ.Տ.

Հավելված N 2

2023 թվականի _____ -ին

կնքված N_____ պայմանագրի

«Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման» ծրագրի գծով 2023 թվականի բյուջետային հատկացումների սահմանաքանակների վերաբերյալ ժամանակացույց*

Հազար դրամ

Ծրագրի միջոցառման անվանումը	Ընդամենը տարեկան	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2023թ. պետական բյուջեից, ընդ որում (*թվերը ներկայացված են աճողական կարգով)											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ.	սեպտեմ.	հոկտեմ.	նոյեմ.	դեկտեմ.
Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակության և կրթական ծրագրերի իրականացում՝ առանց տարիքային սահմանափակման	**175211,5**	**14187,2**	**28374,3**	**42561,5**	**57710,7**	**72859,9**	**88009,1**	**102811,8**	**117614,5**	**132417,0**	**146681,8**	**160946,6**	**175211,5**

Պետական մարմին՝
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8,
ՀՎՀՀ 02506264
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության աշխատակազմի գործառնական
վարչություն
հ/հ 900011194330

Գլխավոր քարտուղար՝ Գևորգյան

Կազմակերպություն՝
«Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՎՀՀ 02509478
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության աշխատակազմի գործառնական
վարչություն
հ/հ 900018004821

Տնօրեն՝ Ա. Մարգարյան